

Թուրքներն, բովանդակում է նա և՛ թէ նորա թագաւորութեան երկրորդ տարին (այսինքն է՝ յամին 704), նա գրաւեց Բաբելոն, և բնակչներին առաքեց Արախտի (Arakhti), զոր հնագէտք համարում են նոյնն որպէս մեր Երասխի գետն (Araxes):

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ս Ր Ա Ն Ա Ն Գ

ԲԱՌԻՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՐԱՆԱՅԳ. — Հայկազեան հատ. Բ, էջ 757 Ա սրւնի մէջ, բառիս նշանակութիւնը կը գրէ, «Շեղչակոյտ սպանեցոց», և հոմաւնիշ կը համարի զայս «Ջրահանք» բառին. իսկ Առձեռն բառգ. էջ 739 նոյն կարծէ զայն «Սրահանկ» և «Սրիկայ» բառից հետ: Վկայութիւն մը միայն ունի Մատթէոս Ուռհայեցիէն. — Տրուած մեկնութիւնները ուղիղ չեն թուիր. և «Ջրահանք» են բառից հետ ամենեկին հոմանիշ չէ: — Բառիս ստուգարանութիւնը արդէ կազմութենէն իսկ յայտնի է. սրահանք, այսինքն՝ սուսերաւ հագ, վրան տուր հագնող կամ հանգնող (մարդ): Սրահանք, կը նշանակէ սպառազէն, թիկնապահ, կտրիճ զինուոր, կամ կտրիճ մարդ: Բառը յիշուի համապատասխան է միջնադարեան յունարենի σπαθάριος բառին. և այս՝ երկու իմաստով ալ, թէ բառին նիւթական նշանակութեամբ, և թէ միանգամայն պաշտօնական գործածութեամբ: — Միւրթար Գոշ իր Դատաստանագրքի զԼ. Միւրթարի պարտաւ (արքունիքի) զանազան աստիճանները թուելով՝ բնագիր ձեռագրի 531 էջին մէջ կը գրէ. «և ի նոցանէ լինին սպառախարք». անհասկանալի բառ մը: Համառոտութեան համար ձեռագրաց տարբերութիւնները զանց կ'ընեմ. Միայն մեր 1253 ձեռագիրը (Է, գ), բառը հաւա-

տարմար օրինակելէն վերջ, անոր տիպ տառերուն վրայ նշան մը կը դնէ և նոյն տողի զիմաց՝ լուսանցքի մէջ՝ (էջ 515) նշանին դէմ յ գիրը կը դնէ. ասով ընթերցողին կ'իմացնէ թէ այն բառը թոյով պէտք է գրել, և սպառախ հմմ. spatia, σπάδιον, իտլ. spada կամ spata (σπαθάριος) կարդալ և ոչ սպառախարք: Սակայն, այսու հանդերձ, հայ կարդացող մը՝ չէր կրնար հասկնալ թէ ինչ ըսել է սպառախ կամ սպառախարք: Անոր համար Դատաստանագրքի ուրիշ օրինակ մը, մեր ձեռագրաց է, գ. 214, զոր ժԳ դարէն արդի կարելի չէ կարծել, իր 414 էջի լուսանցքին մէջ, սպառախարք՝ անհասկանալի բառին հանդէպ՝ կը դնէ սրահանք հայերէն բառն: Ուրեմն, սրահանք ըսել է սպառախարք, և սա՝ է սպառախ(ք), այսինքն՝ յունական σπαθάριος, և որովհետեւ վերջինս թիկնապահ, սպառազէն, կտրիճ մարդ, կամ կտրիճ զինուոր կը նշանակէ, հետեւաբար նոյն նշանակութիւնն ունի նաև սրահանք բառը, քանի որ Սպառախի իբրև հայերէն թարգմանութիւն զրուած է՝:

Ուստի, Հայկազեանի և Առձեռնի ղոյն բառին տուած մեկնութիւնը՝ քաղարձակապէս անյարմար է թէ Միւրթար Գոշի բացատրութեան, թէ Ուռհայեցոյն նախադասութեան Միւրթար. կ'ըսէ. (ձ. էջ 531). «Յորժամ ի ճանապարհի լինի արքայն՝ զսուրբ խաչն ի նոցանէ կրէ, և ի նոցանէ լինին սպառախարք, չորս արք որք զգէնան կրեն», վերև ցուցինք որ սպառախարք կամ լաւ ևս սպառախք բառին հայերէնը՝ սրահանք է. արդ ինչ իմաստ կը մնար Գոշի նախադասութեան մէջ թէ որ սրահանք արդարև «շեղչակոյտ սպանեցոց» նշանակէր. «Թագաւորը ճամբորդութեան առնէ՝ Ս. խաչն իրենցով կ'առնէ, և ասոնցմէ կ'ըլլան (սպառախք = սրահանք), այսինքն մեռելներու կոյտ մը՝ որ չորս հոգի կ'ըլլան».

1. Թէ այս բառը թիկնապահ, սպառազէն են կը նշանակէ, ահա թէ ինչ կ'ըսէ Forcellini, Lexicon totius latinitatis հո. Ե, էջ 580, Բ սրւն, Թ. 4, զոր բառն բառ լատիներէնէ ի հայ կը թարգմանեն. «Spatharius կամ Spatarius կը թուի զինուոր մը սրով վա-

ռնալ, որ՝ իրը պաշտօնեայ՝ կայսեր կամ զօրավարաց (Dúces) հետ կամ ետէն կ'երթար, Թէ՛ անոնց (մարմինը) անձը պաշտպանելու, Թէ՛ միանգամայն անոնց հրամանները կատարելու. որով ի պաշտօնէ, Թագաւորաց պազաւան մէջ իշխանութիւն մ'ունէր».

աւ նախադասութեան մէջ, կը կրկնեմ, ինչ իմաստ կայ. բնաւ Մինչ շատ իմաստ կ'ըլլայ՝ թէ որ Գոշի վերին նախադասութիւնը թարգմանեմք. «Թագաւորը ճամբորդութեան ելած ատեն՝ սուրբ խաչն իրենցմէ կ'ընդունի, և ասոնցմէ կ'ըլլան բիկնապահները, (սրահանգ = սպաստխարը = սպաթարը σπαθάρου, spatharii) որ չորս հոգի կ'ըլլան — Նմանապէս Մտթ. Ուռհայեցւոյն ցով (էջ 7)՝ սրահանգ ամենեկին «Հողակոյտ սպանելոց» չի կրնար նշանակել, այլ «արս հինգհարիւր սրահանգ» ի փայտ հանեալ սատակէր չարաչար», ըսել է, «հինգհարիւր կտրիճ մարդիկ փայտ հանելով ահաւոր կերպով սպանեց», և ոչ թէ՝ «հինգհարիւր սպաննուած մարդերու կոյտը փայտ հանելով՝ փճացուց»։ — Ըսածներէս ուրեմն յայտնի կը մնայ որ սրահանգ = սպաստխար, արքունիքի իբր պաշտօն առնուած՝ կը նշանակէ թիկնապահ, սպառազէն, փակ սովորական սովամար՝ ըսել է կտրիճ մարդ, զինուոր, սուսերածիգ, և ո՛չ բնաւ մեռելոց կոյտ։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՏՈՒԽՆ

ԿԱՆԱԾ ԳԱՇՏՆ ՇԻՐԱԿԻ

ԿԱՊՈՅՏՆ ԱՐԱԳԱԾ

(Շար. տես Բազմ. 1928, էջ 108)

Ի բաց թողնով խորհրդական միտքը, Լուսաւորչի կանթեղին, և եկեղեցական պատմութեան յիշած սրբավայրերին, որոնք փրուուած են Արագածու լանջերի վրայ, յորոյ ոչ սակաւք նշանաւոր ուխտատեղիք են Հայ Ժողովուրդին՝ որոնք իբր ջանք լուսատու անշէջ վառուում են և արծարծում հաւատացեալների սրտի մէջ հաւատքը, և միայն կեդրոնացնելով մեր ուշքն բնաբնական և բեւոյթների վրայ, ասում ենք, գուցէ նոքա հրաւիրած և ձգած են դաշտի վրայ ապրող ռամկին ուշադրութիւնն վսեմական լեռան

վրայ, յորմէ ծներ է Ժողովրդական աւանդավէպն։

Աւելորդ է ասելն որ ես իսկ մերթ ընդ մերթ տանջուեր եմ հետաքրքրութեան խթաններէն. երեւակայած եմ, ինչպէս Անգիւստինի կղզիների մանտրտիկ ծխող բոնիւրներն, նոյնպիսի ծակեր խորունկ քարայրներէ՝ միոյն կամ միւսի միջէն վեր ծխող բոց առնող զագեր, չրջմոյլի հուրեր և այլն որոնք գիշերի մթութեան մէջ թուացեր են վառուող լապտերներ։ Արդարեւ աչքի պատրանքն նպաստած է երեւակայութեան, և զրոյցներու կազմուելուն։ Այսպէս հիւսիսային կողմի երկնիզ սրագագաթ կատարի գոգն, դաշտէն կ'երեւի լայնատարած գուր մի, իբր հարթային բերան, ասում է ինք՝ հոն է կախուած ճրագը։ Բայց մի օր յաւոյնեց ինձ գնալ մօտիկ, և ի՛նչ. տեսի մի գեղեցիկ ձորահովիտ, կանաչ մարգ և զլլալցող ուր մուր առուակ մը ջինջ և մաքուր ջրի, որ արտորանօք վազում էր Կիզգի-Տէր կոչուած ձորէն դէպ ի վար, համանուն Պարսիկ գիւղն։ Այդ հովտին մէջն էր Ջափար աղայի հովոյն (Խարտ) իւր գարաման սպիտակ ուխարներու հօտերով։

Մեր նախնեաց ուշադրութենէն իսկ չէր վրիպած Արագածու խորհրդական լեռ մը լինելն իւր դժուարութեամբով, իրենձերով և խորշերով, ահարկու և անմատչելի, ուր՝ բոլոր Հայաստանի մէջ Հայոց նախարարներն անքոյթ հանգստարան մը պատրաստում են իրենց թագաւորների անարգութեան մատնուած ոսկորներին։ Այսպիսի տիրասիրութեամբ չթողին Հայաստանի բախտ օտար հողի վրայ գաղթելու։ Ո՞վ գիտէ թէ հընդակատար խառնարանին մէջ թաղուած չեն ոսկորտիքն որ դամբարան մը կազմում է, պատմականոր Փաջներու հողիներու բնակչութեան։ Եթէ պատմութեան գաղտնիքն լուծել հեշտին չէ, սակայն բնութեան գաղտնիքին խելամուտութիւնն աւելի դիւրին է և հրապուրիչ, քանզի բնութիւնն ինքնին պատ-

1. Ջոր. Մուրիլի Ս. Գէորգ, Ոչական, փարփի, Կոջայ Ս. Գէորգ, Թաւլէնի Աւետարան, Հատիկոյ Ս. Ուխտն և ուրիշ փոքրեր։